

2019թ-ի հունվարի 30-ին տեղի ունեցավ Հայթաղ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 01.11.2018-30.01.2019թթ-ի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ժողովին մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակիցները, համայնքի բնակիչները:

01.11.2018-30.01.2019թթ-ի ընթացքում Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Հայթաղ համայնքի 18 ուսանողների համար տրամադրվել է միկրոավտոբուս անվճար երթևեկելու համար:
2. Հոկտեմբեր ամսին գյուղապետարանի ուժերով կատարվել է աղբահանություն համայնքի փողոցները մշակույթի տան հուշայունների տարածքները, մանկապարտեզի տարածքը մաքրվել է խոտից:
3. Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին համայնքի ազգաբնակչությանը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտականությունները կատարելու համար:
4. ԴՕՕՍԱՖ-ում սովորող 2 ուսանողների ճանապարհային ծախսերը հոգացել է գյուղապետարանը :
5. Հայթաղ համայնքում մահացած 4 բնակիչների ընտանիքներին հատկացվել է ֆինանսական օգնություն:
6. Անցկացվել է համայնքի ավագանու 3 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին, բնակիչների սոցիալ տնտեսական իրավիճակին վերաբերվող հարցեր:
7. Համայնքում սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական մեկ անգամ կատարվում է աղբահավաք:
8. Դեկտեմբերի 22-ին Հայթաղ համայնքի նախակրթարանի և մինչև 5-րդ դասարանի աշակերտներին տրվել է ամանորյա նվերներ:

9. Համայնքի սոցիալապես անապահով մեկ ընտանիքի նորամուտի առիթով տրվել է 100000 հազ. դրամ գումար:
10. Եվս մեկ ընտանիքի տրվել է ֆինանսական օգնություն բուժման նպատակով:
11. Համայնքի և կադաստրի հետ համատեղ տարվել են աշխատանքներ Հայթադի ԲԱ-ի շենքի քարտեզագրման գործընթացը կազմակերպելու համար՝ սեփականության վկայականի համար:
12. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն՝ հակահամաճարակային միջոցառումներ:
13. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 18 որոշում և արձակվել է 4 կարգադրություն՝ համայնքի բնակիչների հողամասերի գործառական նշանակությունը փոխելու, հասցեավորման, ինքնակամ կառուցված օժանդակ կառույցները օրինականացնելու:
14. Հաշվետու ժամանակահատվածում բնակիչների դիմումով կատարվել է 16 հողի չափագրում և սահմանների ճշտում, կատարվել են հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման աշխատանքներ:
15. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և անց է կացվել 4 հանդիպումներ ազգաբնակչության և վարկավորող կազմակերպությունների հետ:
16. 2018թ-ին Հայթադի գյուղապետարանի աջակցությամբ շարունակվել են կարելային ինտերնետ ցանցի կառուցման աշխատանքները բնակիչների համար:
17. Հաշվետու ժամանակահատվածում համայնքի սոց. անապահով մոտ 60 ընտանիքների տրվել է ֆինանսական օգնություն /բնամթերքի տեսքով/:
18. Հաշվետու ժամանակահատվածում երկու սոցիալապես անապահով ընտանիքների / նորածին ունենալու կապակցությամբ, յուրաքանչյուրին՝ 50000 հազ դրամի չափով/ տրամադրվել է ֆինանսական օգնություն:
19. Նոյեմբեր ամսվա ընթացքում կազմակերպվել է դասընթաց բնակիչներին օգնելու երկարաժամկետ վարկավորումներ ստանալու և ջերմոցային տնտեսություններ հիմնելու համար: